


ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Թարգմանեց ՇՎԱՐԴ



ԱԶՈՎ. ՍԵՎԵՐՈՎՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՌՈՍՏՈՎ - ԴՈՆ
1936

63.
2-18

04 AUG 2010

Пролетарият
1949 г.

Научная Библиотека
Тр при КГУ
КГУ Читиндагы
Филиал Котерхан

ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Բարգմանք ՇՎԱՐԴ

ԱՋՈՎ-ՏԵԿՆՈՎՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ — 1936

01. 2013



28686.60

ՄՏ ԿԱՅԱՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԿՈԼԵՈՉԻԵՐՈՒՄ 1936 ԹՎԻ
ԳՄՐՆԱՆԱՑԱՆՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԿԿ(Բ) ՍԶՈՎ-ՍԵՎԾՈՎՑԱՆ ՅԵՐԿԻՎՈՄԻ
ՅԵՎ ՅԵՐԿԻՎ-ՈՐԾԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Ընկեր Ստալինի ցուցմունքների կատարումը՝ մոտակա
3 — 4 տարում հացահատիկի արտադրությունը յերկրում
մինչև 7 — 8 միլիարդ փթի հասցնելու մասին, և դրա հի-
ման վրա յերկրամասում հացահատիկային ու տեխնիկա-
կան կուլտուրաների բերքը մոտակա 2 — 3 տարում կրկնա-
պատկելու խնդիրը, Դեպքում պետությունը մարզի հետ ունե-
ցած մրցակցությունը մեր հանձն առած պարտավորու-
թյունները պահանջում են մոտեցող գարնանացանի աշխա-
տանքների ագրոտեխնիկական վորակի արմատական բարե-
լավում: 1936 թվի բուշկիկյան բերքի հիմքը պետք է դրված
լինի գարնանացանի ժամանակ:

Յերկրկումը և Յերկրգործկումը վորոշում են.

1. Հաստատել գարնանացանի վերջնական պլանն ըստ
ռայոնների, կուլտուրաների և սեկտորների:
2. Հաստատել ըստ ռայոնների հացահատիկային և տեխ-
նիկական ամենագլխավոր կուլտուրաների նվազագույն
պարտադիր բերքատվությունը, վորը պետք է գերազանցվի
ռոցիալիստական մրցակցության հիման վրա:
3. Նկատի ունենալով, վոր վորջ գարնանացանի համար
հատկացված հողաշերտը (կլինը) լիովին աշնանավար ե
արված, գարնանացանի աշխատանքների կենտրոնական

խնդիրը համարել ցանքսի ժամկետների առավելագույն կրճատումը, հասկավորների ցանքսը կատարելով վոչ ավելի քան 5 — 7 որում. միևնույն ժամանակ ամբողջ աշնանավարը (ինչպես հասկավոր, այնպես ել շարատունի կուլտուրաների համար) տափանվելու յեն (յերկու անգամ) վոչ ավելի, քան 2 — 3 որվա ընթացքում:

Հաստատել հասկավոր կուլտուրաների վերջնական ժամկետները ըստ ույոնների կոլխոզներին:

4. Այդ նպատակով տրակտորային ամբողջ պարկը, առաջին հերթին «ՉՏԶ» թրթուրընթաց տրակտորները, առաջին հնարավորություն դեպքում (նայած հողի ցամաքելուն) պետք է աշխատանքի հանվեն տափանելու և ցանելու համար: Բոլոր տրակտորները պետք է լիովին ապահովված լինեն կցաններով (սցեպկա), վորոնք կցվող ինվենտարին թույլ տալին առավելագույն բեռնվածություն («ՉՏԶ»-ին 50 տափան, 6 տրակտորային շարքացան, «ՄՏԶ»-ին 18 — 20 տափան, 1,5 — 2 շարքացան):

Նույնպես լծկանի վոչ պակաս քան 75%-ը ոգտագործել տափանման ու ցանքսի համար, առաջին հնարավորության դեպքում անցնելով ցանքսի աշխատանքներին, թեկուզ և ընտրովի:

Նկատի ունենալով տափանների և շարքացանների պակասությունը, պետք է վերանորոգել վոչ միայն ՄՏ կայաններում ու կոլխոզներում բոլոր յեղածներն, այլև վերականգնել առաջ խտան (բրակ) համարված տափանները, շարքացանները, թեթև գութանները և պարտադիր կերպով կատարել նոր տափանների, կցվող գործիքների, մարկերների արտադրության պլանը նույնիսկ կոլխոզներում ու ՄՏ կայաններում, վորը պետք է ապահովի տափանման ու ցանքսի անցկացումը սահմանված ժամկետներին:

5. Նկատի ունենալով, վոր հնարավոր է վաղ սկսել գարնանացանի աշխատանքները, պարտավորեցնել ռայոնական կազմակերպություններին, ՄՏ կայաններին ու կոլխոզներին՝ գարնանացանի նախապատրաստական բոլոր աշխատանքները (տրակտորների և գյուղատնտեսական ինվեն-

տարի վերանորոգումը, փոխանակվող սերմացու ֆոնդերի փոխադրումը, սերմացուի գտումը և նրա ծրուհակության ստուգումը, ցանքսի արտադրական պլանները կազմելը ՄՏ կայանների, կոլխոզների, դաշտավարական ու տրակտորային բրիգադների համար, դեկավար կադրերի, բանվորների և կոլխոզնիկների դասավորումն ու նրանց հրահանգումը և այլն) վերջացնել փետրվարի 15-ից վոչ ուշ, այն հաշվով, վոր փետրվարի 15 — 17-ին անցկացնել փորձնական յեղութներ դեպի դաշտ, գարնանացանի պատրաստության փոխադարձ ստուգատեսներ, յուրաքանչյուր ՄՏ կայանում ու կոլխոզում, ռայկումի առաջին կամ յերկրորդ քարտուղարի կամ ռայգործկումի նախագահի մասնակցությամբ:

Տրակտորիստներ, կոլխոզների աշխատողներ, կուսակազմակերպիչներ և գյուղական ու կոլխոզային ուրիշ կադրեր պատրաստող (բացի անասնապահական կադրերից, կոմբայնավարներից ու մեխանիկներից) կուրսերի, դպրոցների պարավումներները վերջացնել մինչև փետրվարի 20-ը, այն հաշվով, վոր այդ կադրերն անհապաղ աշխատանքի անցնեն իրենց ՄՏ կայանում, կոլխոզում կամ բրիգադում:

Մինչև այդ ժամանակն ել պետք է կնքվեն սոցմրցակցության պայմանագրեր կոլխոզների, բրիգադների միջև, յեղելով Դնեպրոպետրովսկի մարզի հետ ունեցած մրցակցության և Յերկրկումի ու Յերկրգործկումի 1936 թվի հունվարի 8-ի վորտչման պայմաններից՝ բերքատվությունը կրկնապատկելու և 1936 թվին լավագույն կոլխոզներում ու բրիգադներում ռեկորդային բերքատվություն ունենալու վերաբերյալ ստալինյան արշավի մասին:

6. Պահպանել 1936 թվին ՄՏ կայանների և կոլխոզների միջև 1935 թվին կնքված պայմանագրերի պայմաններն ու պարտավորեցնել ՄՏ կայաններին ու կոլխոզներին մինչև փետրվարի 20-ը վերջացնել պայմանագրի կնքման կամպանիան:

Պահպանել 1936 թվի արտադրանքի անցյալ տարվա նորմաները և կոլխոզներում ձիերով ու ձեռքով կատարված աշխատանքների գնահատումն ըստ աշխուրների:

Պահպանել տրակտորիստներին՝ անցյալ տարիներում գոյություն ունեցող աշխատանքների դնահատումն (ըստ աշխատողների) ու աշխատավարձի պրոգրեսիվ սխեմայի, վոր սահմանված է Աշխատանքի և Պաշտպանություն Մոնիթորինգի վորոշումով 1933 թվի սեպտեմբերի 21-ին:

Հաստատել տրակտորային աշխատանքների բարձր նորմաները՝ Հողօգտագործատի նոր որինակելի նորմաներին հիման վրա:

Սահմանել նույնպես տրակտորիստների աշխատավարձի պրոգրեսիվ սխեմայի տափանման, ցանքսի, կուլտիվացիայի, պնդացած հողը (գիսկավոր գործիքով) և խողանները տրակտորներով վարելու աշխատանքներում:

Հաստատել ՄՏ կայաններում տրակտորային բրիգադների կազմակերպման հին կարգը (յուրաքանչյուր բրիգադում 3—5 «ՄՏ2» տրակտոր կամ համապատասխան մեկ «ՏՏ2» և 1—2 «ՄՏ2» կամ «Ունիվերսալ»), իբրև կանոն սահմանելով, վոր տրակտորային բրիգադն ամբողջ տարին ամրացվում է միևնույն կոլխոզին:

Վառելանյութի խիստ տնտեսման նպատակով, տրակտորային աշխատանքներում հաստատել վառելանյութի ծախսման միջին պակասեցրած նոր նորմաներ:

Հաստատել ամբողջ տրակտորային պարկի համար յերկու հերթի աշխատանք, որական քսանական ժամ և 1936 թվին «ՄՏ2», «ԽՏ2» տրակտորներից յուրաքանչյուրի աշխատանքի միջին արտադրանքը հաստատել 720 հեկտար, «ՏՏ2» տրակտորինը — 2000 հեկտար:

7. Պահպանել 1936 թվին անցյալ տարվա ցանքսի միջին ռայոնական նորմաները և՛ նայած հողին, ցանքսի ժամկետին և այլ պայմաններին՝ թույլ տալ ցանքսի նորման 10 տոկոսի չափ բարձրացնել կամ իջեցնել:

Հաստատել ագրոկանոնների բարձր պահանջներ՝ հողամշակման վորակի, սերմացուի վորակի, ինչպես և ցանքսի խնամքի նկատմամբ:

Հաստատել տեսակավոր ցանքսերի պլանը յերկրամասում, ցորեն՝ 732.182 հեկտար կամ ընդհանուր ցանքսատարածության 81,3%-ը, դրանից՝ «Մեյյանոպուս 069» տե-

սակից — 230 հազար հեկտար, «Լյուտենցենս 062» տեսակից — 244 հազար հեկտար, գարի՝ 563.821 հեկտար կամ ընդհանուր ցանքսատարածության 56,8%-ը, դրանից «Խարկովյան 355/133» տեսակից — 71.600 հեկտար, «Կրուգլիկ 188/49» տեսակից — 11 հազար հեկտար, տեղական բարելավված չորս կողանի տեսակից — 472 հազար հեկտար, արևածաղիկ՝ 409.731 հեկտար կամ ցանքսի ընդհանուր պլանի 76%-ը, դրանից «Ժգանովյան» տեսակից 75 հազար հեկտար, «Կրուգլիկ Ա. — 41» — 210 հազար հեկտար, «Սարատովյան 169» — 112 հազար հեկտար, վարսակ՝ 54.387 հեկտար կամ ցանքսի ընդհանուր պլանի 36,2%-ը, յեզիպտացորեն՝ 300 հազար հեկտար կամ ցանքսի ընդհանուր պլանի 57,1%-ը, դրանից «Մինեգոտա-13-Նքստրա» տեսակից 209 հազար հեկտար, «Ստերլինգ» տեսակից — 69 հազար հեկտար, և տեսակավոր ցանքսեր՝ տղկանեփի, բամբակի, ճակնդեղի, ծխախոտի — 100%-ով:

Կատեգորիկ կերպով արգելել գարնանացանում դաշտերի ցանքաշրջանառությունը, ինչպես և ցանքաշրջանառության մասնավոր կուլտուրաների հերթակայության ամեն տեսակ խախտումը: Վերացնել ցանքսատարածությունները յուրացրած կոլխոզների արտոնությունները, վորն ունեյին ցանքսի պլանի գերակատարման համար, իբրև ցանքսաշրջանառության պլանը խախտող արտոնություններ: Ցանքսաշրջանառությունը խախտողներին պետական պատասխանատվության յենթարկել:

Մրգելել 90%-ից պակաս ծլունակ, աղտոտված ու ցորենաճանճով (կլեշ) վարակված սերմացույով ցանքսը և ամբողջ սերմացույի վորակի յերկրորդ ստուգումն ու լրացուցիչ գտումն ավարտել յերկրամասի հարավային ռայոններում փետրվարի 15-ից վոչ ուշ, իսկ հյուսիսային ռայոններում — փետրվարի 20-ից վոչ ուշ:

Արգելել ձևավոր ցանքսը, նաև գիշերային ցանքսը, սակայն թույլատրել գիշերները տրակտորով տափանելն ու վարելը:

Նկատի ունենալով, վոր կոլխոզները բավականաչափ ապահովված են տրակտորներով, մասնավորապես թրթու-

բընթաց տրակտորներով, ժամանակին տափանելու և ցանելու համար արգելել գերավաղ շաղաքանը:

Ծանօթի ժամկետները կրճատելու համար թույլ տալ, վեր հասկավորները, բավականաչափ շարքացաններ չլինելու դեպքում, ցանվին մաքուր աշնանավարում թեթև գութաններով, Յերկրհողվարչության հաստատած չափերով: Հասկավոր կուլտուրաների սերմացուն հողում թաղել 4 — 6 սանտիմետր խորությամբ, իսկ արևելյան մասում — մինչև 7 սանտիմետր խորությամբ, այնպես վոր սերմացուն անպայման հասնի հողի խոնավ շերտին:

Աշնանավարը հասկավորով խտացված կամ շատ աղտոտված լինելու դեպքում պարտավորեցնել կուլտիվացիայի յենթարկել կամ նորից վարել:

Կատեգորիկ կերպով արգելել յեզիպտացորենի, տզկանեփի և տեխնիկական այլ կուլտուրաների ցանքսը կուլտիվացիայի չենթարկված աշնանավարում:

Յեզիպտացորենի, արևածաղկի և տզկանեփի ամբողջ ցանքսը պետք է անցկացնել բացառապես տրակտորային շարքացաններով այն հաշվով, վոր նա հետագայում կուլտիվացիայի յենթարկվի ու փնջավորվի (բուհեփրովկայի յենթարկվի):

Կոլխոզների կողմից ագրոտեխնիկայի արդեն յուրացված ձևերի անցկացման հետ միասին, կոլխոզներն ու ՄՏ կայանները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն այնպիսի նոր միջոցների պարտադիր կատարման վրա, ինչպես յարովիզացիան (500 հազար հեկտար յերկրամասում), դաշտերի պարարտացումը գոմաղբով, մոխրով (190 հազար հեկտար), շարատունի և տեխնիկական կուլտուրաների մշակման մեքենայացված նոր մեթոդների արմատացումը:

Ինքըատվությունը կրկնապատկելու համար տարվող պայքարը պահանջում է, վոր արդեն գարնանացանի ընթացքում կոլխոզի դաշտերում կիրառվեն դյուղատնտեսական գիտության բոլոր միջոցառումները և լավագույն կոլխոզների, բրիգադիւրների, բերքի վարպետների առաջավոր փորձը, վորի համար անհրաժեշտ է, պարնանացանն սկսե-

լուց առաջ, կոլխոզի առաջավոր աշխատողների հետ լայնորեն քննարկել հողի մշակման ու ցանքսի խնամքի վերաբերյալ անհրաժեշտ միջոցառումները՝ կոլխոզի յուրաքանչյուր հարյուր հեկտարանոց արտամասի (կլետկա) վրա առանձին:

Պարտավորեցնել ՄՏ կայանների դիրեկտորներին և կոլխոզների նախագահներին խստագույն հսկողություն սահմանել տափանման և ցանքսային աշխատանքների վրա, կրկնակի ստուգման յենթարկելով ցանքսային աշխատանքները, այդ ստուգումը կատարում է անձամբ կոլխոզի նախագահը ՄՏ կայանի ներկայացուցչի հետ բրիգադի դաշտերում թե անմիջապես տափանման ու ցանքսի միջոցի, և թե հետո — ծելու ժամանակ:

8. Պարտավորեցնել ռայոնական կազմակերպություններին անպայման ապահովել գարնանացանի նախապատրաստումը ժամանակին ավարտելու գործն այն հաշվով, վոր տափանումն սկսելուց առնվազն 5 որ առաջ տրակտորային և դաշտավարական բրիգադները գտնվեն դաշտավայաններում, վոր սերմացուն, վառելանյութը և այլն փոխադրվեն բրիգադները, վոր մինչև այդ ժամանակ դաշտավարական ու արտկտորային յուրաքանչյուր բրիգադի բրիգադիւրը վոչ միայն ունենա գարնանացանի արտադրական պլանը, այլև դաշտում արդեն ծանոթացած լինի այն հողամասերին, ուր կատարվելու յեն տափանումն ու ցանքսը, և վոր լրիվ սահմանված լինի բրիգադիւրների և ողակավարների անձնակազմը, ինչպես և նախատեսված լինեն բրիգադի աշխատանքին վերաբերյալ բոլոր հարցերը, վորպեսզի յուրաքանչյուր կոմունիստ, բանվոր ու կոլխոզնիկ ճշտվ իմանա իր պարտակությունները:

Հացահատիկային և տեխնիկական կուլտուրաների մշակման ու խնամքի ագրոտեխնիկական պահանջները բարձրացնելու համար միվող պայքարի պայմաններում առանձին նշանակութուն և ստանում կանոնավոր կերպով և ուշադրությամբ կցողներ (պրիցեպլշիկ) ու դաշտավարական բրիգադներում ողակավարներ ընտրելու, ինչպես և ամբողջ տարին դրանց ավյալ աշխատանքին ամրացնելու

գործը: Ռայգործկոմիտեները պետք է հատուկ հաշվառման վերց-
նեն կոլխոզների ողակավարներին, արգելելով նրանց աշ-
խատանքից հեռացնելն՝ առանց ռայգործկոմի համաձայ-
նության:

Պարտավորեցնել կոլխոզների նապազանքներին ճշտու-
թյամբ կատարել Ֆերկրգործկոմի յերրորդ պլենումի վորո-
շումն այն մասին, վոր շարատունի, տեխնիկական կուլտու-
րաների մշակման ու բերքահավաքի համար պետք է կազ-
մակերպել մնայուն ողակներ՝ վորոշ հողամասեր ամրացնե-
լով նրանց:

Ցանքսի աշխատանքներն սկսելուց առնվազն 15 օր
առաջ հանգիստ թողնել ու լավ կեր տալ քաշող ուժին
(ձիերին, յեղներին), սահմանելով քաշող ուժի դրության
համար վոչ միայն ձիապանի և յեղապանի, այլ և այն
կոլխոզնիկի պատասխանատվություն, վորին ամրացված
են ձիերն ու բանող յեղներն աշխատանքի ժամանակ:

Մարտի 1-ից աշխատանքին մասնակցելուց լիովին ազա-
տել 25 հազար ծանրած ձիեր, իսկ ապրիլի մեկից — 75 հա-
զար ծանրած ձիեր:

Նշելով միանգամայն անհանդուրժելի դրությունն առան-
ձին կոլխոզներում և ՄՏ կայաններում, հատկապես Հյուս-
սիսային-Դոնյան շրջանում, ուր բացակայում են բարեկարգ
դաշտային տաբոռներ ու վագոնիկներ, պարտավորեցնել
ՄՏ կայաններին և կոլխոզներին, ՄՏ կայանի դիրեկտորի
և կոլխոզի նախագահի անձնական պատասխանատվությամբ,
անպայման մինչև գարնանացանն ավարտել տաբոռների և
վագոնիկների կառուցումը բոլոր բրիգադներում ու ստեղծել
դաշտային աշխատանքի միանգամայն կուլտուրական պայ-
մաններ: Հատուկ ուշադրություն դարձնել հանրային մն-
դառության նախապատրաստման (որական առնվազն յե-
րեք անգամ տաք սնունդ) և անհրաժեշտ գործիքներն
ու ապրանքները դեպի բրիգադները փոխադրելու գոր-
ծին:

Պարտավորեցնել ՄՏ կայանների դիրեկտորներին և կոլ-
խոզների նախագահներին անպայման վճարել տրակտորիստ-
ներին ունեցած պարտքերը մինչև փետրվարի 20-ը:

Տրակտորային ու դաշտավարական բրիգադների աշխա-
տանքում պետք է սահմանել յերկաթյա պրոլետարական
դիսցիպլինա և կարգապահություն: Կոլխոզին ու ՄՏ կայա-
նին փաստապատճառող դիտակցաբար կամ անգիտակցաբար
կուլակության արարք ունեցող ծուլին, դատարկաշրջիկին,
կորգիչին ու խուլիգանին պետք է անողորմաբար հակահար-
ված տալ:

Գարնանացանին նախապատրաստվելու գործն այնպես
պետք է տանել, վոր առաջին հնարավորության դեպքում
ամբողջական ճակատով ծավալվեն ցանքսի աշխատանք-
ները, անպայման աշխատանքի առաջին իսկ օրերից, ապա-
հովված լինեն արտադրանքի նորմաների վոչ միայն կա-
տարումն, այլև գերակատարումը, և ամենամեծ չափով կրո-
ճատվեն դաշտային աշխատանքների ժամկետները:

9. Պարտավորեցնել ռալկոմներին ու ռալգործկոմներին
քննարկել այս վորոշումը, ինչպես նաև գարնանացանի գործ-
նական պլանը ՄՏ կայանների ու կոլխոզների կուսակցա-
կան ժողովներում փետրվարի 15-ից վոչ ուշ, այն հաշվով,
վոր նույն հարցը փետրվարի 15-ից մինչև 20-ը քննարկվի
գյուղխորհուրդներում և կոլխոզային ժողովներում:

Գարնանացանի աշխատանքները դեռ չսկսած, պետք է
ամբողջ ռայոնական ակտիվն ամրացնել ՄՏ կայաններին,
կոլխոզներին, բրիգադներին այն հաշվով, վոր ոգնություն
հասցվի ու բոլշևիկյան պայքարի օրինակ ցույց տրվի կա-
նուխ սկսված, կարճ ժամկետում գլուխ բերված, լավորակ
գարնանացանի համար, վորն ապահովում է մոլախոտերի
վերջնական վոչնչացումը և բարձր բերքը:

10. Տափանման սկզբից սահմանել ռայոնական կազմա-
կերպությունների ամենօրյա տափանման արդյունքների
աճող ամփոփումն և առանձին ել՝ ցանքսինը:

* * *

Ֆերկրկոմը և Ֆերկրգործկոմը կոչ են անում բոլոր կոլ-
խոզնիկներին ու կոլխոզնիկուհիներին, ՄՏ կայանների ու սով-
խոզների բոլոր բանվորներին և բանվորուհիներին, սոցմը-
ցակցության, ագրոտեխնիկայի տիրապետման հիման վրա,

ստախանովյան շարժումը գյուղում ծավալելու, յերկրամասի գյուղատնտեսության առաջավոր ստախանովականների, բերքի վարպետների որինակն ոգտագործելու հիման վրա, — գարնանացանի ասպարեզում, Դնեպրոպետրովսկի մարզի կոլխոզների և սովխոզների հետ կնքված սոցմրցակցության մեջ ձեռք բերել առաջին հաղթանակը:

Ազով-Սևծովյան յերկրամասի կոլխոզային ու բանվորական մասսաների՝ բերքատվությունը կրկնապատկելու համար տարած ստախանյան արշավը պետք է ապահովի գարնանացանի հաջող անցկացումը, պետք է ապահովի սոցիալիստական դաշտերի բուլշևիկյան բերքը:

1936 թ. ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ՊԼԱՆԸ*

Ազով-Սևծովյան յերկրամասի կոլխոզագյուղացիական սեկտորի գարնանացանի ամբողջ պլանը կազմում է 4.052.212 հեկտար, վորից հասկավորներ — 2.042.062 հեկտար, յեզիպսացորեն — 525.000 հեկտար, արեվածադիկ — 540.000 հեկտար, տղիամեփի (կեշեփինա) — 99.114 հեկտար:

Այս պլանից՝

ԱՂԷՆԻ ՌԱՅՈՆԸ ցանելու յե 6824 հեկտար, վորից յեզիպսացորեն — 2110 հեկտար, Ռայոնի հասկավորների պարտադիր բերքատվության նվազագույն չափը մի հեկտարից — 24 ցենտներ, յեզիպսացորենը — 27 ցենտներ:

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՌԱՅՈՆԸ ցանելու յե 3886 հեկտար, վորից հասկավորներ — 495 հեկտար, յեզիպսացորեն — 1600 հեկտար, Յանքսի ժամկետը — 3 աշխատանքային որ. հասկավորների բերքատվությունը մի հեկտարից — 17,5 ցենտներ, յեզիպտացորենինը — 28 ցենտներ:

ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՌԱՅՈՆԸ ցանելու յե 25.875 հեկտար, վորից հասկավորներ — 15.500 հեկտար, յեզիպսացորեն — 3695 հեկտար, արեվածադիկ — 1700 հեկտար, Յանքսի ժամկետը — 6 աշխատանքային որ. հասկավորների բերքատվությունը մի հեկտարից — 9,8 ցենտներ, յեզիպտացորենինը — 13,5 ցենտներ, արեվածադիկինը — 8,5 ցենտներ:

ՍՈՉԻ — ՔԱՂԱՔԸ ցանելու յե 1450 հեկտար, վորից յեզիպսացորեն — 332 հեկտար, հասկավորների բերքատվությունը մի հեկտարից — 24 ցենտներ, յեզիպտացորենինը — 27 ցենտներ:

* Պլանը տպվում է կրճատված:

1936 ԹՎԻ ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ԿՈՒՆՏՈՒՐԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ.

Սահմանել 1936 թվի գարնանացանի և գյուղանտե-
սական կուլտուրաների խնամքի վերաբերյալ հետևյալ ագ-
րոտեխնիկական կանոնները.

1. ԿՈՒՆՏՈՒՐԱՆԵՐԻ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ՅԵՎ ՀՈՂԻ ԳԱՐՆԱՆՈՑԻՆ
ՄՇՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.

1. Գարնանացանի կուլտուրաների տեղավորումը 1936
թվի գարնանացանի հաստատված պլանի համաձայն պետք
է կատարել ցանքսաշրջանառության սահմանված դաշտերի
և ցանքսաշրջանառությամբ սահմանված կուլտուրաների
հաջորդականության միանգամայն համապատասխան:

Արդելել-յուրաքանչյուր կոլխոզում ընդունված ցանք-
սաշրջանառության խախտումը: Սահմանել, վոր բոլոր վա-
րահարմար հողերում, վորոնք մինչև այժմ չեն մտցված
ցանքսաշրջանառություն, պետք է մտցնել ինքնուրույն ցանք-
սաշրջանառություն, իսկ հնարավորության դեպքում—
մտցնել նրանց գոյություն ունեցող ցանքսաշրջանառության
մեջ:

2. Կոլխոզները և ՄՏ կայանները պետք է ապահովեն
ուժերի և միջոցների (տրակտորների և լծկանի) այնպիսի
դասավորություն, վոր բոլոր պայմաններում ամբողջ աշ-

նանավարը տափանվի վոչ ավել՝ քան 2—3 որում: Միե-
նույն ժամանակ տափանից ազատ մնացած տրակտորները
և լծկանը պետք է գործադրվեն ցանքի համար այն հաշ-
վով, վոր ցանքը լրիվ կերպով ծավալվի դաշտային աշխա-
տանքի հենց առաջին որից և կատարվի ուղղակի տափա-
նումի հետքից:

Տափանումը (և նրանց հետևից ցանքսը) սկսել անհա-
պաղ յուրաքանչյուր առաջին հողամասի ձյունից ազատ-
վելուց հետո և կատարել վոչ պակաս, քան յերկու հետքի,
գլխավորապես վարածի լայնությամբ և թեք, մինչև վոր
լրիվ հավասարվի հողի մակերեսը:

Այն հողամասերում, վորոնք աղտոտված են արմա-
տապտղային մոլախոտերով (սեզ, խոզուկ) դուրս քաշել
արմատները զսպանակավոր կամ ծանրացված տափան-
ներով կամ կուլտիվատորներով, թաթավոր կուլտիվատոր-
ներով, արորներով, վորոնց հետքից կատարել տափանում:
Դուրս քաշված արմատապտուղները հեռացնել դաշտից և
այրել: Տափանումից առաջ հեռացնել դաշտից ձյունա-
պահման բոլոր միջոցները:

Այն բոլոր տարածությունները, վորտեղ գարնանային
կուլտուրաները պետք է ցանել գարնան ցելերում, նախո-
րը—մինչև վարելը, մաքրել մոլախոտերից և շարատունկ
կուլտուրաների մնացորդներից (բողիչներից):

3. Այն հողամասերում, վորոնք սաստիկ խտացված են
կամ աղտոտված աշնանային մոլախոտերով (ջրկոտեմով և
այլն), նպատակ ունենալով ավելի լավ բաժանել հողը
հասկային և վաղացան շարատունկ կուլտուրաների ցանքսի
համար, առաջին յերկու որվա ընթացքում մշակել լայնու-
թյամբ, առանց շրջելու հողը, հետևից տափանելով: Մշակ-
ման համար գործածել կուլտիվատորներ և բազմախոփա-
նիներ հանած թևերով:

Աշնանավարի շատ խտացվածության, վերարմատային
մոլախոտերով (սեզով, խոզուկով) աղտոտվածության դեպ-
քում, յերբ այդ աշնանավարը հատկացվում է հասկային-
ների և վաղացան շարատունկների ցանքսի համար, առաջին
2 որը հերկել բազմախոփանիներով և արագավարիչներով

լախությամբ, 8—10 սանտիմետր խորությամբ և դրանից հետո դուրս հանել մոլախոտերի արմատապտուղները:

4. Գարնանավարը կատարել բացառապես թևավոր գութաններով՝ վոչ պակաս, քան 20—22 սանտիմետր խորությամբ, անհապաղ հետևից տափանելով վոչ պակաս, քան յերկու հետքի:

Վարը կատարել միայն արտի յերկարությամբ (զագոնով), մեջտեղից կամ կողքերից, թույլ չտալով ձևավոր վարելու: Այդ դեպքում այն հողամասերը, վորտեղ անցյալ տարի վարը կատարվել է արտի մեջտեղից, վարել կողքերից և ընդհակառակը:

Այն հողամասերը, վորոնք մի շարք տարիների ընթացքում հերկվել են մի ուղղությամբ, գարնանը վարել լայնությամբ, հաշվի առնելով մակերեսի կազմությունը:

Վարելու ժամանակ ապահովել գութանի բոլոր խոփերի խորության համաչափությունը և դաշտի հարթ մակերեսը (առանց թուփերի և ակոսների) ճիշտ սարքադրելով, կցելով և ուղղություն տալով գութանները, թույլ չտալ բացատներ, անպայման վարել արտի ծայրերը:

Խնամքով մաքրել գութանը մոլախոտերից, կպած հողից, թույլ չտալով վոր ծածկվի հողով, կանոնավոր կերպով ամրացնելով խոփերը: Արգելել զիսկավոր դանակների հանելը և սարքավորել յերկարիչներով տրակտորային գութանների թևերը, իսկ ձիաքարշ գութանների վրա սարքավորել հասարակ դանակներ:

Գարնանավարի ժամանակ անպայման ոգտագործել գութանները ձևիչներով և անկյունիչներով (կեռերով):

Արգելել գարնանավարը կատարել թեթև գութաններով, ցորենի գութաններով և խոզանավարիչներով:

5. Շարատունկ տեխնիկական կուլտուրաների և այլ աշացանքս կուլտուրաների ցանքսից առաջ անպայման մշակել աշանավարը բազմախոփանիներով և կուլտիվատորներով, անհապաղ հետևից տափանելով: Այն դաշտերում, վորոնք աղտոտված են վերարմատային մոլախոտերով, թույլ չտալ զիսկավոր գործիքներ գործածելու:

6. Կոլխոզի վարչությունը բրիգադիւնների հետ միա-

սին, գյուղատնտեսի պարտադիր մասնակցությամբ պարտավոր է անհապաղ քննարկել և յուրաքանչյուր դաշտամասի համար մշակել, թե ինչպիսի միջոցառումներ պետք է անցկացնել մինչև ցանքան սկսելը, նայած հողի դրությանը և այդ դաշտամասերի աղտոտվածությանը (քանի հետքի, ինչ ուղղությամբ տափանել, վորտեղ, յերբ, ինչպիսի գործիքներով կատարել մշակումը կամ հերկը, ինչպիսի հողամասում և ինչպիսի գործիքներով ապահովել մոլախոտերի հերկումը, դուրս քաղումը և այլն):

Յուրաքանչյուր դաշտամասի վերաբերյալ պետք է կազմել նախացանքային միջոցառումների պլան, վորն ստորագրելու յեն վարչության նախագահը, բրիգադիրը և ՄՏ կայանի գյուղատնտեսը:

II. ՀԱՍԿԱՅԻՆ ՀԱՅԱԲՈՒՅՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

1. Հասկային կուլտուրաների ցանքսը պետք է կատարել բարձրորակ, մոլախոտերից և ցորենաճանճից մաքրված, մրիկից ախտահանված, 90 տոկոսից վոչ պակաս ծլունակություն ունեցող սերմացուով:

2. Հասկային հացաբույսերի ցանքն ավարտել վոչ ավել, քան 5—7 որում դաշտային աշխատանքների սկզբից, այսինքն՝ յուրաքանչյուր կոլխոզում տափանով դաշտ դուրս գալու որից:

Աշնանավար ցելերում ցանքսը կատարել տափանումից անմիջապես հետո, այնպես դասավորելով ուժերը, վոր տափանումն ավարտվի յերկու կամ ամենաուշը յերեք որում և տափանելու հետ միաժամանակ կատարվի ցանքսը:

Գարնան ցելերում ցանքսը կատարել հերկից և տափանումից անմիջապես հետո, թույլ չտալով ամենաճնշին ընդհատում:

3. Այն դեպքում, յեթե հասկային կուլտուրաները ցանվում են սակավախոնավ հողերում, ցանքսից անմիջապես հետո հարթել հողը գլանակներով, գործածելով ողակավոր, կողավոր կամ հարթ գլանակներ, կցելով թեթև տափան:

4. Յերկրամասի կողմից հաստատված (անցյալ տարվա) ցանքսի ռայոնական



կուլտուրայի վերաբերյալ կարող են կոլխոզները բարձրացնել կամ ցածրացնել 10 տոկոսի սահմանում, ՄՏ կայանի ավագ գյուղատնտեսի թույլտվությամբ, նայած հողի բնույթին, դաշտերի աղտոտվածությանը և սերմացույի վորակին:

5. Հասկայինների սերմացույի ծածկումը շարժացաններով կատարել 4—6 սանտիմետր խորությամբ, իսկ արևելյան չորային ռայոններում—մինչև 7 սանտիմետր խորությամբ, նայած հողի բնույթին և խոնավությանը, տեղավորելով սերմացուն խոնավ հողաշերտում: Սերմացուն ավելի համաչափ ծածկելու համար շարժացանին կցել շղթա կամ թեթև տափան:

6. Ցանքը հասունացված (յարովիզացիայի յենթարկված) սերմացույով կատարել լավագույն աշնանավարի ցելերում: Հասունացումը կատարել ակադեմիկ Լիսենկոյի հրահանգի միանգամայն համապատասխան:

7. Նկատի ունենալով, վոր վաղ ցանքս կատարելու համար յերկրամասը լիովին ապահովված է տրակտորներով և մասնավորապես թրթուրնթաց տրակտորներով,—արգելել 1936 թվի դարնան գերավաղ (շաղացան) ցանքսը:

8. Գարնանն ամբողջ աշնանացանը տափանել յերկաթե տափանով մի հետքի, շարքերի լայնությամբ:

Աշնանացանի տափանումն սկսել այն ժամանակ, յերբ գետինն այնքան էլ ցելսոտ չէ, և վոչ մի դեպքում հողաժասերում կոշտերը փշրելու համար ամենանպաստավոր առիթը բաց չլթողնել:

Միայն նոսրացված կամ ծլերը չամրացված աշնանացաները չտափանել: Իսկ այն դեպքում, յերբ այդպիսի ցանքերում կեղև առաջանա, փխրել այն ողակավոր կամ կողավոր գլանակներով:

Այն դեպքում, յերբ աշնանացանքսի արմատափնջիկները դուրս ընկնեն—առաջին հնարավորության դեպքում գլանակով հարթել ցանքսերը:

9. Հասկային աշնանացան ու գարնանացան կուլտուրաների բոլոր ցանքսատարածությունները պետք է քաղհանել մոլախոտերից:

Սահմանել քաղհանի կազմակերպման և անցկացման հետևյալ պարտադիր կարգը:

Աշնանացանքսերում հենց վոր յերեկման առաջին մոլախոտերը (փուշը, ջրկոտեմբ, կորնգան, կեչի և այլն), կոլխոզի վարչությունը ջոկում և ամենափորձված կոլխոզնիկներին և մի որվա ընթացքում ստուգում է համատարած կերպով աշնանացանի աղտոտվածության դրությունը: Ստուգման հիման վրա կազմվում է աշնանացանը մոլախոտերից քաղհանելու պլանը, ըստ վորում պլանի մեջ անպայման մտնում են բոլոր տարածությունները և յուրաքանչյուր հողամասի համար սահմանվում են առանձին աշխատանքի նորմաներ և քաղհանի համար անհրաժեշտ քանակությամբ մարդիկ:

Առաջին քաղհանը պետք է ավարտել 5—7 որում:

Այդպիսի կարգով քաղհանի աշխատանքը կազմակերպվում է նաև գարնանացան կուլտուրաների բոլոր տարածություններում, ըստ վորում առաջին ստուգումը կազմակերպվում է տվյալ հողամասի ցանքից 10 որ հետո:

Առաջին քաղհանից հետո մոլախոտերի աճման դեպքում նույն ձևով կատարել աշնանացանքի և գարնանացանքի կրկնակի քաղհան, անպայման ավարտելով այն՝ մինչև հացաբույսերի ցողունավորվելը:

Հասկային կուլտուրաների քաղհանի անցկացման պարտադիր պլանը յուրաքանչյուր ռայոնի համար հանդիսանում է աշնանացան և գարնանացան հասկային հացաբույսերի փաստացի տարածությունը: Քաղհանի պլանի կատարման ուղեբառիվ հաշվետվության համար փաստաթուղթ հանդիսանում է այն ակտը, վորն ստորագրում են կոլխոզի նախագահը և ՄՏ կայանի գյուղատնտեսը, մոլախոտերից մաքրելու վերաբերյալ և վորը կազմվում է յուրաքանչյուր 100 հեկտարանոց դաշտամասի համար:

10. Քաղհանը կատարել ձեռքով, թույլ չտալով գործածել հոշոց (տյապկա): Ամենավատ մոլախոտերը (փուշ, կաթնուկ և այլն) արմատախիլ անել ձեռքով (դրա համար պատրաստել ձեռնոցներ) կամ փորել փայտե սուր փորձիչներով, առանց հացաբույսերը վնասելու:

Քաղաքում մուսուլմանները պետք է մաքրել դաշտից:

Այն հողամասերում, վորոնք սաստիկ աղտոտված են յերկամյա կորնզանով և կորնզանի արմատախիլ անելը փոսեր և առաջացնում և փշացնում ցանքսը, արմատախիլ անելու փոխարեն, հնարավորին չափ, տակից կտրել ցողունը՝ չբիպչելով հացաբույսին:

11. Հասկային հացաբույսերի տեսակավոր ցանքսատարածություններում կատարել տեսակավոր բաղնիք, բույսերի հասկավորումից հետո, արմատախիլ անելով տարբեր տեսակները և ուրիշ բույսերը:

III. ՅԵՐԻՊՏԱՅՈՐԵՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Աշնանավարի գարնան տափանուսից հետո յերկրամասի բոլոր ռայոններում, յեգիպտացորենի ցանքսից մի յերկու որ առաջ, ինչպես ամբողջ աշնանավարը, այնպես ել վաղ գարնանավարը պետք է անպայման մշակել 6—8 սանտիմետր խորությամբ, իսկ խոնավ ռայոններում՝ 8—10 սանտիմետր խորությամբ բազմախոփաններով, առանց շրջելու, կամ կուլտիվատորներով, վորից հետո պետք է տափանել: Մշակումը կատարել առավելագույն հիմնական վարի լայնությամբ:

Ամենաաղտոտված հողամասերում, նպատակ ունենալով հողն ավելի լավ մաքրել մուսուլմաններից, կատարել աշնանավարի նախացանքսային կրկնակի մշակում — կուլտիվացիա կամ հերկում. առաջինը — մուսուլմանների մասսայական ծլման դեպքում և յերկրորդը — յեգիպտացորենի ցանքսից 1—2 որ առաջ:

2. Յեգիպտացորենի ցանքսի համար թողնել առողջ նորմալ զարգացած սիմինդրը, վորի համար ձեռքով ընտրել սերմացույի տեսակետից տիպիկ, լավագույն մեկ տեսակի սիմինդրները:

Սերմացուն անպայման զտել սերմապտիչներով և ցանքսի համար ռգտագործել միայն նորմալ ծլունակութուն ունեցող խոշոր և միջակ սերմացուն:

3. Յեգիպտացորենի ցանքսը կատարել միայն կայուն տաք յեղանակ սկսվելու դեպքում, յերբ մի քանի որվա ընթացքում հողի որական միջին ջերմութունը 10 սանտիմետր խորությամբ հասնում է ջերմության 10 — 12° ի ըստ Յելսիուսի (այդ ժամանակը սովորաբար զուգադիպում է բալենու և ծորենու ծաղկման հետ):

4. Նպատակ ունենալով հետագայում ապահովել յեգիպտացորենի մեքենայված խնամքն ու բերքահավաքը, յեգիպտացորենի ցանքսն անպայման կատարել միայն տրակտորային զուլգ-զուլգ միացրած շարքացաններով արտի յերկարությամբ, նրա ծայրերը չթողնելով առանց ցանելու: Ցանքսից առաջ շարքացանները պետք է հարմարեցնել վոչ միայն ցանքսի նորմային, այլ և նրա համաչափությանը և սերմերն առանձին խողովակներով ծածկելու:

Մոդովակավոր շարքացանները պետք է անպայման բեռնավորել միահավասար քաշով:

5. Յեգիպտացորենի ցանքսի շարքամիջի լայնությունը, ամբողջ յերկրամասում, սահմանվում է 90 սանտիմետր («Ռոստոսելմաշ» շարքացանով ցանելիս — 91,8 սանտիմետր, յերկու շարքացանի միջև թողնելով 75 սանտիմետր):

6. Յեգիպտացորենի սերմերը ծածկել 8 — 10 սանտիմետր խորությամբ: Հողի վերին շերտը չորացած լինելու դեպքում ցանքսը կատարելիս սերմերը ծածկել մինչև 12 սանտիմետր խորությամբ, տեղավորելով խոնավ հողաշերտում և ցանքսից անմիջապես հետո հարթել ողակավոր կամ կողավոր գլանակներով:

7. Յեգիպտացորենի այն ցանքսերի համար, վորոնք պետք է մշակել յերկարությամբ և լայնությամբ, մեքենայացված ձևով (փնջաձև նոսրացնելով) յուրաքանչյուր ռայոնում ցանքսի նորման սահմանել՝ հաշվի առնելով սերմացույի տեսակն ու խոշորությունը, առաջնորդվելով հետևյալ աղյուսյակով (կազմված այն ցանքսերի համար, վորոնց շարքամիջի տարածությունները կազմում են 90—91,8 սանտիմետր, այն հաշվով, վոր փնջաձև նոսրացնելիս փրջերը թողնել 80 սանտիմետր շարքամիջերի լայնությամբ և 30 սանտիմետր յերկարությամբ):

1000 հասկիների բացարձակ քաշը (գրամներով) գոտիները և տեսակները		175	200	225	250
Հյուսիս-արևելյան ռայոններ (Պերսիանովկա—Պիսչա- նոկովսկայա գծից հյուս- սիս)	Հատիկի ցանքսը (կելոգրամ- ներով յուրաքանչյուր հեկ- տարում)				
	1. Հյուսիսային—Պիսչովի և վաղահատության տեսակներից նրա նմանները	—	34	39	43
	2. «Միննեղոտ-13-նքստա» .	25	29	32	36
Կենտրոնական ռայոնները (մինչև Յեյսկ—Նովոպոլի- սովսկայա գիծը)					
«Միննեղոտ-13-նքստա» . .		28	32	36	40
Հարավային ռայոնները	1. «Միննեղոտ-13-նքստա» .	33	38	43	48
	2. «Սաերլինգ»	—	32	36	40
	3. «Լիմինգ»	—	—	32	36

8. Յեզիպտացորենի բոլոր չկտրտված ցանքսերը նոր-
մալ զարգացած ծիլերով յերկրորդ տերևի հայտնվելու
դեպքում անպայման տափանով տափանել շարքերի լայ-
նությամբ մեկ կամ յերկու հետքի թույլ զարգացած, կամ
նոսրացված ծիլերը, նաև բազմամյա մոլախոտերով աղ-
տոտվածները չպետք է տափանել, այլ շարքերը վորոշե-
լիս կատարել շարքամեջ մշակում և շարքերը քաղհանել
ձեռքով:

9. Յեզիպտացորենի այն ցանքսերը, վորոնք պետք է
լայնությամբ և յերկարությամբ մշակվեն մեքենայացրած
ձևով, յերբ յեզիպտացորենի բույսերը հասնեն ուղղաձիգ
10—15 սանտիմետր բարձրության, կատարել առաջին
կուլտիվացիան (փնջավորումը) ըստ լայնության գույգ
կուլտիվատորներով, անպայման գործածելով մարկեր (ակո-
սագծիչ) և ավարտել 4—5 որում:

Քաղհանիչ գործիքների առաջին աշխատանքը կատարել
նշված գծով:

10. Ըստ լայնության կատարված առաջին կուլտիվա-
ցիայի (փնջավորման) սկզբից 5—7 որ հետո կատարել միջ-
շարքային կուլտիվացիան (մշակումը) ըստ յերկարության

և միաժամանակ ձեռքով նոսրացնել փնջերը, թողնելով փն-
ջում յեզիպտացորենի բույսի սահմանված թիվը (3—4)
և հեռացնելով մոլախոտերը: Ըստ յերկարության մշակումը
պետք է ավարտել 4—5 որում:

11. Սյն դեպքում, յերբ փնջավորման համար հատկաց-
ված յեզիպտացորենի ցանքսերում վաղորոք հայտնվեն
մոլախոտերը, յերբ դեռ յեզիպտացորենը չի հասել նոր-
մալ փնջավորման համար 12—15 սանտիմետր բարձրու-
թյան, սկզբում մշակել ըստ յերկարության, իսկ հետո,
արդեն՝ ըստ լայնության, փնջերը նոսրացնելով ձեռքով:

12. Մոլախոտերի աճման դեպքում, բայց առաջին ըստ
լայնության մշակման (փնջավորման) սկզբից վոչ ուշ, քան
15 որ հետո անպայման կատարել յերկրորդ տրակտորային
մշակումն ըստ լայնության և վորից հետո յերկրորդ
մշակումն ըստ յերկարության և փնջերը քաղհանել ձեռ-
քով:

Յերկրորդ ըստ լայնության մշակման դեպքում կուլ-
տիվատորի թաթիկները պետք է նեղցնել մինչև 50—60
սանտիմետր, վորպեսզի փնջի յերկու կողմերից 10—12
սանտիմետր լայնությամբ մնան պաշտպանող շերտեր:

13. Լայնության առաջին կուլտիվացիան, ինչպես
յերկայնքի առաջին կուլտիվացիայի (փնջավորման) դեպ-
քում, փխրացման խորությունը սահմանվում է 7—8 սան-
տիմետր, կրկնակի մշակումների դեպքում՝ փխրացման խո-
րությունն իջնում է մինչև 5—6 սանտիմետրի:

14. Յերկրորդ մշակումից հետո մոլախոտերի աճման
դեպքում անպայման կատարել յերկայնքի շարքամիջերի
3-րդ և 4-րդ մշակումը, վորն ավարտել այն ժամանակ,
յերբ դեռ յեզիպտացորենի տերևները շարքերում այնքան
չեն մեծացել, վոր իրար կպչեն:

15. Յեզիպտացորենի այն ցանքսերում, վորտեղ չի կա-
տարվելու ըստ լայնության մշակում (փնջում), առաջին
միջշարքային մշակումը շարքերի քաղհանի և նոսրացման
հետ միասին սկսել յերրորդ տերևը յերկարության դեպքում և
ավարտել 6-րդ որում:

Առաջին միջշարքային մշակումից 10—12 որ հետո

անպայման կատարել 2-րդ միջարքային մշակումը, միա-
ժամանակ քաղհանելով և ստուգելով բույսերի շարքերը և
այդ աշխատանքն ավարտել 4—5 օրում:

Յերկրորդ մշակումից հետո, մոլախոտերի աճման դեպ-
քում, պետք է անպայման կատարել շարքամիջերի 3-րդ և
4-րդ մշակումը, ավարտելով վերջինս մինչև յեգիպտացո-
րենի շարքերի փակվելը:

16. Յեգիպտացորենի ցանքսի փնջերը ձեռքով նոսրաց-
նելիս փնջերում թողնել 3—4 բույս: Յեգիպտացորենը
չփնջավորող ցանքսերում նոսրացնելիս, շարքերում պահել
հետևյալ տարածությունը.

յեգիպտացորենի «Հյուսիսային Դակոդի» տեսակի հա-
մար 33 սանտիմետր, այն հաշվով, վոր մի հեկտարում
լինի վոչ պակաս, քան 33 հազար բույս:

յեգիպտացորենի «Միննեզոտ-13-Եքստրա» տեսակի
համար հյուսիս-արևմտյան ռայոններում — 40 սանտիմետր,
այն հաշվով, վոր յուրաքանչյուր հեկտարում լինի 28 հա-
զար բույս:

Կենտրոնական ռայոններում — 30 սանտիմետր, այն
հաշվով, վոր յուրաքանչյուր հեկտարում լինի վոչ պակաս,
քան 31 հազար բույս:

հարավային ռայոններում — 30 սանտիմետր, այն հաշ-
վով, վոր յուրաքանչյուր հեկտարում լինի վոչ պակաս քան
31 հազար բույս:

«Ստերլինգ» տեսակի համար — 35 սանտիմետր, այն
հաշվով, վոր յուրաքանչյուր հեկտարում լինի վոչ պակաս
31 հազար բույս:

«Լիմինգ» տեսակի համար — 40 սանտիմետր, այն հաշ-
վով, վոր յուրաքանչյուր հեկտարում լինի վոչ պակաս 28
հազար բույս:

Յեգիպտացորենի ցանքսերը նոսր բուսած լինելու դեպ-
քում, պետք է տնկումը կատարել անպայման նույն տե-
սակի սերմերով:

17. Յեգիպտացորենի բույսերի վրա մրիկ յերևալու
դեպքում, հեռացնել վարակված մասերը (սիմինդրը, տերե-
ները), դուրս հանելով դաշտից և անպայման այրելով:

1. Արևածաղկի ցանքսը կատարել միաժամանակ, կամ
վաղացան հասկային հացաբույսերի ցանքսից անմիջապես
հետո, խնամքով զտված և ծլունակությունն ստուգված
սերմացույով:

2. Խտացված աշնանավարի կամ մոլախոտերով սաս-
տիկ աղտոտված հողամասերում արևածաղիկը ցանելուց
առաջ անպայման կատարել նախացանքսային մշակում
բազմախոփանիներով ու կուլտիվատորներով: Վերաբա-
տային մոլախոտերով վարակված հողամասերում մշակումը
կատարել կուլտիվատորներով կամ թաթավոր կուլտիվա-
տորներով:

3. Ցանքը կատարել բացառապես տրակտորային շար-
քացաններով, առավելապես դիսկավոր շարքացաններով:
Արգելվում է ցանել թեթև գութաններով, բուլկերներով
կամ ձեռքերով:

4. «Ռոստոսելմաշ» գործարանի շարքացաններով ցանե-
լիս շարքամիջերի լայնությունը սահմանել 61,2 սանտի-
մետր (շարքամիջերի ծալերում — 75 սանտիմետր) և
«Կրամնայա զվեզդա» գործարանի շարքացաններով ցանե-
լիս — 65 սանտիմետր:

5. Վարակատկուն («ժգանովսկի») արևածաղկի ցանքսը
պետք է կատարել պահպանելով տարածական մեկուսա-
ցումը: Կոլխոզների նախագահները և ՄՏ կայանների գյու-
ղատնտեսներն անձնապես պատասխանատու լեն, վորպես-
զի «ժգանովսկի» արևածաղկի ցանքսը արևածաղկի մյուս
տեսակների ցանքսից 3 կիլոմետրից ավելի մոտիկ չգտ-
նվի:

6. Սերմերը ծածկել 6—8 սանտիմետր խորությամբ
և անհրաժեշտության դեպքում ավելի խոր, սերմերն ան-
պայման տեղավորելով հողի խոնավ շերտում:

7. Սերմացույի նորման յուրաքանչյուր հեկտարում սահ-
մանել:

Աշնանավար ցելերում կատարվող ցանքսերի համար,
վորոնք նախատեսված են արակտորային փնջավորման հա-
մար — 20 կիլոգրամ, իսկ արևելյան ռայոններում — 18

կիլոգրամ և աշնանավոր ցեղերում չփնջավորվող ցանք-
սերի համար — համապատասխանաբար 15 — 13 կիլոգրամ:

Սերմերի ծլունակութունը 95 տոկոսից պակաս և մաք-
րութունը 98 տոկոսից պակաս չպետք է լինի:

8. Արևածաղիկը չորացած վերնաշերտով հողում ցանելիս
կատարել ցանքսերի զլանակում (ավելի լավ է անկյունա-
գծերի ուղղությամբ) փայտե առամնավոր ծանր կամ չու-
գունե ողակավոր զլանակներով:

9. Շարքերում բավարար ծիլեր եւնեցող արևածաղիկի
բույր ցանքսերը, յերբ առաջին զույգ իսկական տերևները
հայտնվեն, շարքերի լայնությամբ տափանել մեկ հետքի
յերկաթե առամնավոր տափաններով:

Արևածաղիկի ծիլերի տափանում չկատարել, յերբ չփնջա-
վորվող ցանքսերում յուրաքանչյուր մետրի վրա միջին
թվով 10 բույսից պակաս կա և մեքենայական նոսրացման
(փնջավորման) համարնախատեսված ցանքսերում մի մետրի
վրա միջին թվով 15 բույսից պակաս կա:

10. Արևածաղիկի ստորգետնյա ցանքսերը տափանել շար-
քերի լայնությամբ յերկու հետքի մինչև ծիլերի յերեկավը,
առաջին հնարավորության դեպքում կատարել այդ աշխա-
տանքը (միաժամանակ տափանելով աշնանավարը):

11. Յերկրորդ զույգ իսկական տերևները հայտնվելիս,
յերբ բույսի խտությունը շարքերում միջին թվով մի մետրի
վրա կազմում է վոչ պակաս, քան 12 հատ, կատարել մե-
քենայացված նոսրացում (փնջավորում) և ավարտել վոչ
ավելի, քան 5 որում:

Ցանքերը փնջավորելիս կտրվածքների լայնությունը
սահմանել 25 — 30 սանտիմետր, իսկ փնջի յերկարությունը
35 — 30 սանտիմետր:

Այն դեպքում, յերբ բույսերի խտությունը շարքերում
փնջի թվով մի մետրի վրա հասնում է վոչ պակաս, քան
12 հատի, փնջավորում չի կատարվում, այլ շարքերը նոս-
րացվում են ձեռքով:

12. Միաժամանակ կամ փնջավորումից անմիջապես հետո
կատարել միջշարքային մշակում — կուլտիվացիա, որակ-
տորային կուլտիվատորներով աշխատելու դեպքում կտրող

մասերն այնպես սարքադրել, վոր շարքերի յերկու կողմե-
րում միան վոչ պակաս, քան 10 — 12 սանտիմետր լայնու-
թյամբ պաշտպանող շերտեր:

13. Արևածաղիկի ցանքսի յերկարության մշակումն
անցկացնելուց անմիջապես հետո կատարել փնջերի նոս-
րացումը և ձեռքով վոչնչացնել մոլախոտերը շարքերում,
թողնելով փնջում 1 — 2 բույս արևելյան ու հյուսիսային ու-
յոններում և 2 բույս՝ կենտրոնական ու հարավային ույոն-
ներում:

14. Այն հողամասերում, վորտեղ փնջավորում չի կա-
տարվում, առաջին միջշարքային մշակումը կատարել, միա-
ժամանակ քաղհանել և նոսրացնել բույսերը շարքերում, յերբ
սկսվեն հայտնվել յերկրորդ զույգ իսկական տերևները. այդ
աշխատանքն ավարտել վոչ ավել, քան 5 որում: Նոսրաց-
ման դեպքում բույսերի հեռավորությունը շարքերում թող-
նել 25 — 30 սանտիմետր, իսկ արևելյան ույոններում —
30 — 35 սանտիմետր:

15. Շարքամիջերի կրկնակի մշակումը կատարել մոլա-
խոտերի հայտնվելու դեպքում, բայց յերեք անգամից վոչ
պակաս, միաժամանակ ձեռքով քաղհանելով մոլախոտերը
շարքերում:

16. Արևածաղիկի սերմային հողամասերում կատարել
տեսակավոր գտում արմատի վրա ծաղկման շրջանում և
բերքահավաքից առաջ, հեռացնելով ամենամեծ չափով հի-
վանդությամբ մշատված և տվյալ տեսակի համար վոչ
տիրիկ բույսերը:

V. ՏՉԿԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

1. Գարնանային տափանումից հետո, տղկանեփի ցանք-
սից 1 — 2 որ առաջ կատարել աշնանավարի մշակումը բազ-
մախոտաններով կամ կուլտիվատորներով, հետևից անմի-
ջապես տափանելով: Տղկանեփի ցանքսը կատարել բավա-
կանաչափ տաքացված հողում, յերբ հողաշերտի շերտու-
թյունը 6 — 8 սանտիմետր խորությամբ, ըստ Յելսիուսի
10 — 12 աստիճանից պակաս չէ, կայուն տաք յեղանակ
լինելու դեպքում:

2. Յանքսը կատարել խնամքով գտված, ծրունակութունն ստուգված սերմացույով, վորը բավարարում է սերմերի համար սահմանված պայմաններին:

3. Տղկանեփի ցանքսը կատարել տրակտորային շարքացանով՝ սարքավորելով այն բարձրից ցանելու համար, իսկ բարձրից ցանելու հարմարութիւնն չունեցող «Ռոստսելմաշի» շարքացանով ցանելիս՝ արձակելով մինչև վերջը արկղիկի շարժական հատակը:

4. Շարքամիջերի լայնութիւնը սահմանել՝ հարավային ռայոններում — 75 սանտիմետր՝ «Կրասնայա զվեզդա» գործարանի շարքացաններով ցանելու դեպքում, «Ռոստսելմաշ» շարքացանով ցանելու դեպքում — 75,6 սանտիմետր, յերկու դեպքում ել շարքամիջերի հեռավորութիւնը թողնելով 75 սանտիմետր:

Յեյսկ — Նովոպոլորովսկայա գծից հյուսիս ընկած ռայոններում շարքամիջերը սահմանել՝ «Կրասնայա զվեզդա» շարքացանով ցանելիս — 65 սանտիմետր, Նույնալիս հանգուցային շարքամիջերով, «Ռոստսելմաշ» շարքացանով ցանելիս — 61,2 սանտիմետր, իսկ հանգուցային շարքամիջերը — 75 սանտիմետր:

5. Տղկանեփի ցանքսի նորման սահմանել՝ չփնջավորվող ցանքսերի համար յուրաքանչյուր հեկտարում 16 կիլոգրամ:

Մեքենայական մշակման (փնջավորման) համար սահմանել՝ շարքամիջերի 75 — 76,5 սանտիմետր լինելու դեպքում — 22 կիլոգրամ, շարքամիջերը 61,2 և 65 սանտիմետր լինելու դեպքում — 24 կիլոգրամ յուրաքանչյուր հեկտարում:

Տղկանեփի սերմերը ծածկելու խորութիւնը սահմանել 6 — 7 սանտիմետր:

6. Հողի վերնաշերտը չորացած լինելու դեպքում ցանելիս սերմերը ծածկել մինչև 8 սանտիմետր խորութիւնը, անպայման սերմերը տեղավորելով խոնավ հողաշերտում, և անբավարար խոնավութիւնն ունեցող հարթել փայտե առամնավոր կամ չուգունե ողակավոր գլանակներով:

7. Շարքերը վորոշելիս ծիւրերի կտրատվելու կամ

ճառովելու դեպքում տղկանեփն անպայման շարքերում տնկել ձեռքով հողոցի (տյապկայի) ոգնութիւնը, Նույն տեսակի սերմերով:

8. Տղկանեփի լավ ծիւրեր հայտնվելու դեպքում և ցանքն անշան աղտոտված լինելիս մոլախոտերի քաղհանը շարքերում և շարքերի յերկու կողմերում կատարել ձեռքով, հողոցի լայնութիւնը, հետևից կատարելով շարքամիջերի մշակում:

Տղկանեփի թույլ ծիւրու դեպքում ձեռքով կատարել համատարած քաղհան — ցանքսերի նոսրացում:

9. Առաջին մշակումից կամ նոսրացումից հետո, տղկանեփի 3 — 4 իսկական տերեփները հայտնվելուց հետո յեկ շարքերը բավական խիտ լինելու դեպքում (միջին թվով մի մետրի վրա վոչ պակաս, քան 6 բույս), տրակտորային գութաններով կատարել մեքենայացված նոսրացում — փնջավորում, կտրվածքի լայնութիւնը սահմանելով 25 — 30 սանտիմետր յեկ փնջերը թողնելով 35 — 30 սանտիմետր:

10. Ըստ լայնութիւնի մշակում — փնջավորումն ավարտելուց հետո, տրակտորով կատարել ըստ յերկարութիւնի մշակում, միաժամանակ հեռացնելով մոլախոտերը յեկ ձեռքով նոսրացնելով փնջերը: Ըստ յերկարութիւնի մշակելիս շարքերի յերկու կողմերում թողնել վոչ պակաս, քան 10 — 12 սանտիմետր լայնութիւնը պաշտպանող շերտեր:

Փնջերը նոսրացնելիս փնջերում թողնել 2 — 1-ական բույսեր: 2փնջավորվող ցանքսերը ձեռքով նոսրացնելիս բույսերի շարքերում թողնել իրարից 40 — 45 սանտիմետր հեռավորութիւնը:

Նոսրացում — փնջավորումը կամ ձեռքով նոսրացումը պետք է կատարել վոչ ավել, քան 5 — 6 որվա ընթացքում:

11. Հետագա միջշարքային մշակումները, շարքերում յեղած մոլախոտերը ձեռքով վոչնչացնելու հետ միաժամանակ կատարվում են մոլախոտեր յերեվալիս, բայց ամառվա ընթացքում վոչ պակաս, քան 5 — 4 անգամ:

VI. ՇԱՔԱՐԻ ՃԱԿՆԴԵՂԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

1. Գարնանացանի տափանդումից և շեյֆով* հարթելուց առաջ շաքարային ձալնդեղին հատկացված աշնանավարի բոլոր տարածություններում մասերի բաժանված դաշտում յուրաքանչյուր հեկտարի վրա փոխադրել 3,5 — 4 ցենտներ մոխիր, անմիջապես ծածկելով տափաններով ու շեյֆով: Նպատակ ունենալով մոխիրը դաշտի մակերեսի վրա համաչափորեն բաշխել, պետք է կիրառել հատուկ պատրաստած 7 — 8 կիլոգրամանոց մոխրաչափեր, յուրաքանչյուր 200 քառակուսի մետրի վրա ցանելով մեկ մոխրաչափ:

2. Աշնանավարը, վորը պատրաստված է շաքարաձալնդեղի համար, տափանել և շեյֆել 1 — 2 որվա ընթացքում գարնանային դաշտային աշխատանքների սկզբից: Տափանելն ու շեյֆելն սկսել անմիջապես յուրաքանչյուր առանձին հողամասի հասնելուց հետո և մի հետքի տափանել ու մի հետքի շեյֆել կամ միայն 2 — 3 հետքի տափանել, առավելապես ըստ լայնության:

3. Տափանումից և շեյֆումից հետո դաշտը նորից ակոսագծել և համաչափորեն շաղ տալ փոսած աղբը 6 — 12 տոնն կամ կոմպոստ (խառնուրդ աղբ) 8 — 10 տոնն յուրաքանչյուր հեկտարին, իսկույն ծածկելով բազմախոփաններով կամ կուլտիվատորներով 10 — 12 սանտիմետր խորությամբ հետեից տափանելով:

4. Մշակումն անցկացնել ընդհանրապես վարի լայնությամբ և միայն արտի յերկարությամբ:

5. Կուլտիվացիայից և տափանումից հետո առանց ընդհատման վաղ հասկային կուլտուրաների ցանքսի հետ միաժամանակ սկսել շաքարի ձալնդեղի ցանքսը, հատուկ սարքված ձալնդեղային շարքացաններով, շարքերը մտցնելով սուպերֆոսֆատ և չորացած մանրած թռչնաղբ: Ցանքան ավարտել 5 որում:

Սուպերֆոսֆատը ցանել միայն չորացած և նախապես մաղված: Յուրաքանչյուր հեկտարի վրա սահմանել հետևյալ-

* Շեյֆը — հատուկ տեսակի տափան է, բաղկացած մի քանի գուգահեռական ձողիկներից:

յալ նորմաները: սուպերֆոսֆատ 1,5 — 2 ցենտներ, թռչնաղբ՝ 1 — 2 ցենտներ:

6. Միջշաքերի լայնությունը սահմանել 44,5 սանտիմետր և սերմերը թաղել 3 — 4 սանտիմետր խորությամբ: ձալնդեղի սերմերի նորման՝ յուրաքանչյուր հեկտարում, 70 տոկոս ծլունակությամբ, 97 տոկոս մաքրությամբ և 15 տոկոս խոնավությամբ դեպքում՝ սահմանել 35 կիլոգրամ:

7. Ցանքսից հետո, այն դեպքում, յերբ հողը բավարարչափով խոնավ չէ, ցանքսը հարթել ողակավոր գլանակներով: Մինչև ծլելը հողի յերեսին կեղև առաջանալու դեպքում կերտել փշավոր գլանակ:

8. Ցանքսի հետ միաժամանակ շաքարի ձալնդեղի դաշտերում փորել վորսացող փոսիկներ և հենց առաջին որից դիտել փշասատուների զարգացման ընթացքը և անհապաղ միջոցներ կիրառել նրանց փոշնացնելու համար:

9. Շաքարի ձալնդեղի ցանքսի փխրացումն սկսել անմիջապես ծլելի յերեվալուց հետո և ավարտել 3-րդ որը: Նոսրացումը կատարել փխրացուցիչներով (մոտիգամներով) 4 սանտիմետր խորությամբ, անպայման ձեռքով լրացնելով այդ աշխատանքը:

10. Նորմալ տերևների առաջին գույգն յերևալուն պես սկսել փնջավորումը (յուրաքանչյուր կուլտուրի համար սահմանված պլանի սահմաններում), ձեռքով անմիջապես նոսրացնելով փնջերը, ավարտելով այն 6 — 8 որվա ընթացքում, բայց վոչ ուշ, քան ծլելի հայտնվելուց 14 որ հետո: Փնջավորումը կատարել «ՈՒԿՍ» և «Ուկրայինկա» չափաներով — այդ նպատակի համար հատուկ սարքադրված թաթիկներով և պաշտպանող դիսկերով: Փնջավորման համար դնել 8,5 սանտիմետր մեծությամբ դանակներ, թողնելով փնջերը 6,5 սանտիմետր յերկարությամբ:

Այն հողամասերում, վորտեղ ծլելը կտրատված են և փշասատուների կողմից փշատված, փնջավորում չկատարել, այլ ձեռքով նոսրացնել:

Բույսերի հեռավորությունն իրարից շարքերում թողնել 18 սանտիմետր թե փնջերը նորացնելիս և թե ձեռ-

քով նոսրացնելիս, վորի համար յուրաքանչյուր նոսրացնողին տալ հատուկ չափ:

11. Հողի անբավարար խոնավության և շաքարի ճակնդեղի դանդաղ աճման դեպքում, նոսրացումը կատարել ձեռքով, սկզբնական ծլման շրջանում, չսպասելով նորմալ տերեֆների առաջին զույգի յերեվալուն: Այդ դեպքում բույսերի հեռավորութունը միմյանցից շարքերում թողնել 4,5 սանտիմետր, այն հաշվով, վոր կրկնակի նոսրացման ժամանակ ավելորդ բույսերը հեռացվեն:

12. Յուրաքանչյուր հեկտարում շաքարի ճակնդեղի նորմալ խտութիւնը պահելու համար նոր բուսած տեղերը պետք է տնկել նոսրացման ժամանակ: Տնկումը կատարել կեսորից հետո, անպայման ջրելով տնկած բույսը:

13. Նոսրացումն ավարտելուց հետո, յերկրորդ օրն սկսել շաքարի ճակնդեղի աղբել տեղական և հանքային պարարտանյութերով, ավելի լավ է լուծված ձեփով:

14. Նոսրացումից առաջ անցկացնել շաքարի ճակնդեղի շարքամիջերի փափկացում 6 — 7 սանտիմետր խորութեամբ: Շաքարի ճակնդեղի նոսրացումը կատարել բոլոր ցանքատարածութիւններում, ավարտելով վոչ ուշ, քան 25 օրվա ընթացքում, ծիլերի հայտնվելու մոմենտից: Կորատվածութեան դեպքում անպայման ձեռքով տնկել շաքարի ճակնդեղի արմատները:

Յուրաքանչյուր հեկտարում բերքահավաքի մոմենտին արմատների խտութիւնն ապահովել վոչ պակաս, քան 100 — 110 հազար հատ:

15. Ստուգումից հետո անցկացնել շաքարամիջերի վոչ պակաս, քան հինգ լրացուցիչ փխրացում ձիաքարշ կամ տրակտորային փխրացուցիչներով (մոտիգամներով): Առաջին լրացուցիչ փխրացումը կատարել 7 — 8 սանտիմետր խորութեամբ, իսկ հետևյալ յուրաքանչյուր փխրացումը նախորդից 1 — 3 սանտիմետր խորը պետք է լինի, այն հաշվով, վոր վերջին փխրացումը կատարվի 15 — 16 սանտիմետր խորութեամբ ոգոստոս ամսին շարքերի բացումից հետո:

Շաքարի ճակնդեղի տունկերը մաքուր պահելու համար

մոլախոտեր յերևալու դեպքում, ձեռքով կատարել վոչ պակաս, քան յերկու լրացուցիչ քաղհան:

16. Շարքամիջերի յերկրորդ լրացուցիչ փխրացումից հետո, անհրաժեշտութեան դեպքում, նայած ցանքների շրջանի, յերկրորդ անգամ պարարտացնել շաքարի ճակնդեղը:

17. Մեքենայացած փխրացում, փնջավորում և շարքամիջերի փխրացում կատարելիս, փխրացուցիչները (մոտիգամները) սարքադրել ստուգողական տախտակի համեմատ: Փխրացուցիչի թաթիկները, դանակները և դիսկերն աշխատանքի ավերող ընթացքում պետք է սրած լինեն, փխրացուցիչ աշխատանքից հետո, յուրաքանչյուր ողակ առանձին ձեռքով պետք է լրացնի աշխատանքը: Շաքարի ճակնդեղը ձեռքով քաղհանելիս կիրառել հատուկ հոշոց 18×4 սանտիմետր մեծութեամբ, անպայման աղեղով:

VII. ԲԱՄԲԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

1. Աշնանավարի առաջին գարնանային տափանումից հետո մոլախոտերի յերեվալու դեպքում, բայց վոչ ուշ, քան 10 — 15 օր հետո կատարել կուլտիվացիան վարածի լայնութեամբ:

Շատ խտացված աշնանավարի հողամասերում նույնպես խոզուկով կամ սեզով աղտոտված ցեղերում կուլտիվացիայի փոխարեն վաղ գարնանը հերկել բազմախոփաններով կամ գութաններով 12 — 14 սանտիմետր խորութեամբ, հետևից անհապաղ տափանելով:

Ցանքսից անմիջապես առաջ (վոչ շուտ, քան ցանքսից մի օր առաջ) կատարել դաշտի 2-րդ նախացանքային կուլտիվացիան 6 — 7 սանտիմետր խորութեամբ հետևից անմիջապես տափանելով:

3. Այն հողամասերում, վորոնք աղտոտված են վերարմատային մոլախոտերով (խոզուկով, սեզով) կուլտիվացիայից կամ հերկելուց հետո վերարմատները սանրել զսպանակավոր կուլտիվատորներով, տափաններով և հարթիչներով, հետագայում հավաքելով վերարմատները տափաններով ու ձիաքարշ փոցխերով: Այդ մոլախոտերը խամ հո-

դերուս տարածված լինելու դեպքում, վերադասաների շուկումը կատարել ձեռքի փոցխերով, յեղաններով և այլն։ Դաշտում հավաքված մոլախոտերը հեռացնում են և այրում։

4. Բամբակի բոլոր սերմացուն նախորդը մինչև ցանքսի սկիզբը պետք է գտել, ձեռքով առանձնացնել վտիտ սերմերից, ուրիշ տեսակների խառնուրդից և կեղտից։

Ցանքսից առաջ բամբակի բոլոր սերմերն ախտահանել գոմոզից (բակտերային հիվանդությունից)։

5. Բամբակի ցանքսը կատարել չոր սերմերով։ Ցանքսն սկսել այն ժամանակ, յերբ հողը 40 սանտիմետր խորությամբ տաքանում է 12 աստիճան։ Ցանքսի ժամկետը մոտավորապես հասնում է ապրիլի 25-ից մինչև մայիսի 5։ Ցանքսը պետք է ավարտել վոչ ուշ, քան 5 որում։

6. Բամբակը արակտորային լայն մշակման յենթարկելու համար, նրա ցանքսը պետք է կատարել շարքամիջերի սահմանված լայնությունը խիստ պահպանելով՝ «1082» շարքացանների համար 65 սանտիմետր, իսկ մնացած բոլոր շարքացանների համար՝ 70 սանտիմետր։

7. Մի հեկտարի ցանքսի նորման սահմանել № 1306 Շրեդեր տեսակից — 57 կիլոգրամ, իսկ № 915 տեսակից — 60 կիլոգրամ։ Բոլոր դեպքերում սերմացույի ծլունակությունը պետք է լինի 85 տոկոսից վոչ պակաս։ Այն դեպքում, յերբ սերմերի ծլունակությունը 85 տոկոսից պակաս է, պետք է ցանքսի նորման ավելացնել՝ ծլունակության յուրաքանչյուր պակաս տոկոսին մի կիլոգրամ։

8. Բամբակի սերմերը ծածկել 4 սանտիմետր խորությամբ, նայած հողի բնույթին, վորակին, բաժանվածությունն ու խոնավությանը, այդ սահմաններում ավելի քիչ խորությամբ ծածկել, յերբ ցանքսն ավելի վաղ և ավելի ծանր հողերումն է կատարվել։ ավելի խորը ծածկել, յերբ ցանքսն ավելի ուշ և ավելի թեթեւ հողերումն է կատարվել։

9. Հողի յերեսին կեղեղ կազմվելու դեպքում, բամբակի ցանքսի և ծլելու ժամանակամիջոցում կեղեղը քանդել փշավոր փխրացուցիչներով, տափաններով կամ ձեռքի փոցխերով։

10. Հենց վոր ծիլերը հայտնվեն և շարքերը նշվեն, սկսել շարքամիջերի մշակումը տրակտորային և ձիաքարշ կուլտիվատորներով, ձեռքի հոշոցներով քաղհանելով շարքերի շուրջը, իսկ շարքերի մեջը՝ ձեռքով։ Մշակումը պետք է ավարտել հարավային ուղղոններում մայիսի 25-ին, իսկ կենտրոնական ու արեւելյան ուղղոններում՝ հունիսի մեկին։

11. Բամբակի առաջին կուլտիվացիան ավարտելուց անմիջապես հետո յերկրորդ իսկական տերեւը հայտնվելու շրջանում սկսել շարքամիջերի 2-րդ կուլտիվացիան և շարքերի քաղհանը ձեռքի հոշոցներով։ Բամբակի այդ մշակումը հարավային ուղղոններում պետք է ավարտել հունիսի 10-ից վոչ ուշ, իսկ կենտրոնական ու արեւելյան ուղղոններում՝ հունիսի 15-ից վոչ ուշ։

12. Նոսրացումն անցկացնելուց հետո բույսերի խտությունը յուրաքանչյուր հեկտարում պետք է կազմի 130 — 140 հազար հատ։ շարքերի միջում բույսերն իրարից 10 սանտիմետր հեռու պետք է գտնվեն։

Նպատակ ունենալով ապահովել մատնանշած խտությունը և բույսի դարգացման ամենանպաստավոր պայմանները, կատարել յերկու նոսրացում։

առաջինը՝ լրիվ ծիլերի հայտնվելու դեպքում, առաջին քաղհանի անցկացման մոմենտին, բույսերը թողնելով իրարից 4 — 5 սանտիմետր հեռավորության վրա կամ մի մեռերի վրա 25 — 20 բույս։

յերկրորդ նոսրացումը — յերկրորդ քաղհանի ժամանակ, վերջնականապես բույսերը թողնելով իրարից 10 սանտիմետր հեռավորության վրա։ Նոսրացման դեպքում առաջին հերթին հեռացվում են թույլ, հիվանդ և չդարգացած բույսերը և յուրաքանչյուր մետրում մնում է 10 բույս, հնարավորության դեպքում իրարից համաչափ հեռավորության վրա։

13. Յերկրորդ մշակումն ավարտելուց հետո, կատարվում է շարքամիջերի յերրորդ մշակումը կուլտիվատորներով և շարքերի քաղհանումը։

Յերրորդ մշակումը պետք է ավարտել հարավային ուղղոններում հունիսի 25-ից վոչ ուշ, իսկ կենտրոնական և արեւելյան ուղղոններում հուլիսի մեկից վոչ ուշ։

Բամբակի չորրորդ մշակումը, ինչպես շարքամիջերում, այնպես եւ շարքերում պետք է ավարտել հարավային ռայոններում վոչ ուշ հուլիսի 10-ից, իսկ կենտրոնական ու արեւելյան ռայոններում վոչ ուշ հուլիսի 15-ից:

Բամբակի հինգերորդ մշակումը կուլտիվատորներով շարքամիջերում և ձեռքով շարքերում կատարվում է անմիջապես չորրորդ մշակումից հետո և բոլոր ռայոններում պետք է ավարտել վոչ ուշ ոգոստոսի 10-ից:

Շարքերի միացման մոմենտից բամբակի շարքամիջային և շարքերի մշակումը կատարվում է ձեռքով:

14. Մոզոկով աղտոտված հողամասերում բամբակի մշակումը կատարվում է ավելի սեղմ ժամկետներում և հինգ մշակման փոխարեն կատարվում է շարքամիջերի ու շարքերի 6—7 մշակում: Ըստ վորում, խոզուկով աղտոտված հողամասերում ընդհանրապես առաջին յերկու մշակումը շարքամիջերում և շարքերում կատարվում է ձեռքի հոշոցներով:

15. Նպատակ ունենալով ժամանակին պայքարել բամբակի ֆլասատուների դեմ և վորոշել ֆլասատուներով վարակված տարածությունները, պետք է խնամքով դիտել ֆլասատուների զարգացման ընթացքը, բամբակի հասունացման ամբողջ շրջանում:

Այն բոլոր դեպքերում, յերբ ֆլասատուները հայտնվում են, անմիջապես ձեռք առնել նրանց դեմ պայքարելու միջոցներ մասնագետների ցուցմունքների համաձայն:

VIII. ԾԽԱԽՈՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ծխախոտի տնկումը կատարել աշնանավարի լավ ցելերում:

2. Աշնանավարի գարնանային տափանուծմի նախաջանքսային հերկի ժամանակամիջոցում նպատակ ունենալով պայքարել մոլախոտերի դեմ, խոնավություն պահպանել, հողակեղեվը վոչնչացնել, վորն առաջանում է անձրևներից հետո, կուլտիվատորով մշակել կամ տափանել:

3. Ծխախոտը տնկելուց 8—10 որ առաջ աշնանավարը մշակել բազմափոփանիներով առանց հողը շրջելու,

վոչ պակաս, քան 8—10 սանտիմետր խորությամբ, իսկ ծովափնյա շրջաններում (Սոչի, Տուապսե, Գելենջիկ) սեզոնական հերկը կատարել շրջող գործիքներով 10—12 սանտիմետր խորությամբ:

4. Ծխախոտադաշտերը տնկման մոմենտին մոլախոտերից միանգամայն մաքուր պետք է լինեն փխրուն հողաշերտով և լավ հարթված մակերեսով:

5. Ծխախոտի աճումը լավացնելու և բերքը բարձրացնելու համար, ծխախոտադաշտերը, առաջին հերթին ուժասպառ հողաշերտերը պետք է պարարտացնել թե հանքային և թե տեղական պարարտանյութերով (մոխիր, թոչնաղբ և այլն):

6. Ֆոսֆորային և կալիումային պարարտանյութերը այն տեղերում, վորտեղ աշնանից են մտցված, պետք է մտցնել տափանելուց կամ աշնանավարի մշակումից առաջ հետեւյալ նորմաներով.

320—400 կիլոգրամ սուպերֆոսֆատ և 200—250 կիլոգրամ 40 տոկոսանոց կալիումի աղ:

Բորակային պարարտանյութերը պետք է մտցնել նախացանքսային մշակման հերկելու մոմենտին յուրաքանչյուր հեկտարին 100—220 կիլոգրամ ծծմբաթթվային ամոնիակ, նայած հողի բնույթին:

Լեռնային ռայոններում ֆոսֆորային և կալիումային պարարտանյութերն աշնանային և գարնանային հերկի ժամանակ պետք է մտցնել նույն նորմաներով, իսկ բորակային պարարտանյութերը—նախացանքսային հերկի շրջանում:

Տեղական պարարտանյութերը՝ մոխիրը, թոչնաղբը, պետք է մտցնել աշնանավարի մշակման շրջանում չորացած և լավ մանրած դրությամբ:

7. Նպատակ ունենալով պայքարել ֆլասատուների (ծղրիտի, բվի) դեմ, աշնանավարը հերկելուց հետո այդ ֆլասատուներով վարակված հողամասերում անպայման մտցնել թունավորված նյութեր թեփից, ճակնդեղից, յեզիպտացորենից, փարիզյան կանաչի կամ շաքարաշրի հետ խառն:

8. Տնկման վերաբերյալ բոլոր նախապատրաստական աշխատանքները (շերմոցային խառնուրդի պատրաստումը,

շրջանակների պատրաստելն ու տպակերը, ծածկոցներ անելը և այլն) ամբողջովին ավարտել փետրվարի 20-ին:

9. Ծխախոտի առողջ և վաղ սածիլ ստանալու նպատակով անպայման կատարել հետեվյալը:

ա) աղբը 100 տոկոսով խոնավացնել ջերմոցների և մարգերի ամբողջ տարածության վրա, այդ աշխատանքն ավարտելով փոշ ուշ փետրվարի 25-ից:

բ) ակտահանել ջերմոցային բոլոր գործիքները (շրջանակները, ծածկոցները, փոցխերը, ջրցիբները և այլն):

գ) լիովին փոխնչացնել մոլախոտերը թե սածիլանոցներում և թե նրանց շուրջը:

դ) ձորիտի դեմ պայքարելու համար սածիլանոցի հողաշերտի մեջ մտցնել փարիզյան կանաչով թունավորված նյութեր՝ թեփից և յեզիպտացորենի հատիկներից:

ե) ապակու տակ ծածկվող ջերմոցների ընդհանուր քանակից (սածիլանոցների տարածության 25 տոկոսը) 50 տոկոսն անպայման պետք է լինի տաքացող շերտով, բացառությամբ ծովափնյա ռայոնների, վորտեղ բոլոր ջերմոցներն ապակու տակ պետք է լինեն առանց տաքացնող շերտի:

10 Սածիլանոցների ոգտակար տարածությունը ջերմոցների համար պետք է լինի 42 մետր, իսկ մարգերի համար՝ 55 քառակուսի մետր՝ տնկման յուրաքանչյուր հեկտարի համար:

Այն դեպքում, յերբ հիվանդություններ յերևան և սածիլները մասամբ փոխնչանան անբարենպաստ յեղանակներից, բայց վերոհիշյալ նորմաներից, նախատեսել պահեստի տարածության 15—20 տոկոսի չափ:

11. Սածիլանոցների ցանքսը պետք է կատարել ծխախոտային ինստիտուտի բացառապես տեսակավոր և ակտահանված սերմերով՝ հետևյալ հաշվով:

Ջերմոցներում՝ 0,8-ից մինչև մեկ գրամ և մարգերում՝ 1—1,2 գրամ յուրաքանչյուր մետրի վրա:

12. Ջերմոցների ցանքսը պետք է կատարել փետրվարի 20-ից մինչև մարտի 20, իսկ մարգերում՝ պետք է ավարտել փոշ ուշ ապրիլի 10-ից:

13. Սածիլանոցային ամբողջ ժամանակաշրջանում աշխատել սածիլների հիշտ և ուշադիր խնամքը, ժամանակին և բավարար ջրելով, քաղհանելով, սննդարար պարարտանյութ ցանկելով, շոգ ժամերին հովացնելով, պարարտացնող ջրումներ կատարելով, բորդոյի հեղուկ սրսկելով և այլ միջոցներով, փորոնք ապահովում են սածիլների կանոնավոր աճումն ու հասունացումը:

14. Տնկելուց առաջ անպայման անցկացնել ամբողջ ծխախոտային սածիլների ուշադիր փորձարկում (ապրոբացիա), ապահովելով առողջ, միանգամայն հասուն և լավ զարգացած սածիլների աճումը:

15. Տնկելը կատարել տեսակավորման ռայոնների հաստատված պլաններին միանգամայն համապատասխան, 30 որվա ընթացքում, այն հաշվով, վոր ամբողջ տունին ավարտել փոշ ուշ մայիսի 30-ից:

16. Նպատակ ունենալով ավելի լավ և արագ արմատացնել ծխախոտի սածիլներն ամբողջ տարածության վրա, տունկի ժամանակ մտցնել հանքային պարարտանյութեր ջրի հետ միասին չոր ձեվով մտցվող պարարտանյութերին սովորական նորմայի մեկ տասներորդի չափ:

17. Ծխախոտատունկի խտությունը:

ա) ՇԱՐՔԱՎԱՅՐԻ ՅԵՎ ՍԱՐԱՏԱԿԻ ՌԱՅՈՆՆԵՐՈՒՄ

Մանրատեղի սեռակներ («Արկադիա», «Տիկ-կուլակ») № 92 և 235) — 65×15 սանտիմետրով (յուրաքանչյուր հեկտարում 100 — 110 հազար արմատ):

Սոսնրատեղի սեռակներ (Տրապիզոն № 92 և 1272) — 60×20 սանտիմետր (յուրաքանչյուր հեկտարում 80 — 85 հազար արմատ):

բ) ԼԵՆԱՅԻՆ ՌԱՅՈՆՆԵՐՈՒՄ (ԱԴԼԵՐ, ՍՈՋԻ, ՏՈՒՍՄՍԵ)

Մանրատեղի սեռակներ (Սամոն) — 60×15 սանտիմետր (յուրաքանչյուր հեկտարից 100 — 110 հազար արմատ):

Սոսնրատեղի սեռակներ (Տրապիզոն № 1272) — 70×28 սանտիմետր (յուրաքանչյուր հեկտարում 50 հազար արմատ):

18. Այն դեպքում, յերբ ֆնտսատուները ֆնտսեն բույ-
սերին կամ վերջիններս մասամբ վոչնչանան, անպայման
տուենկը պետք է անցկացնել բարձրորակ սաժիլներով վոչ
ուշ, քան տնկելուց 5 — 7 որ հետո:

19. Ծխախոտադաշտերում ապահովել առնվազն 4 քաղ-
հանում և դաշտերն ամբողջովին պահել մոլախոտերից մա-
քուր դրուժյամբ:

Առաջին միջարքային մշակումն սկսել և շարքերը միաժա-
մանակ մոլախոտերից մաքրել վոչ ուշ, քան ծախախոտա-
տուենկից 10 որ հետո:

Յերկրորդ քաղհանը և ծխախոտի բուկ տալը կատարել
վոչ ուշ, քան առաջին քաղհանից 10 — 12 որ հետո:

Հետագա քաղհանները բոլոր հողամասերում անց են
կացվում այն հաշվով, վոր դաշտերն ամբողջովին մոլա-
խոտերից մաքուր լինեն:

20. Ծխախոտի ծաղկահանումը պետք է կատարել
ամբողջ տարածության վրա, բացառությամբ հարուստ և
արգավանդ հողամասերի (սևահողի): Ծաղկահատումը պետք
է կատարել յերկու անգամ. առաջին անգամ, յերբ ծաղ-
կում է բույսերի մոտավորապես 40 — 50 տոկոսը, յերկ-
րորդ անգամ՝ յերբ ծաղկում են մնացած բույսերը:

21. Ճյուղահատումն անցկացնել ժամանակին ամբողջ
տարածության վրա, թույլ չտալով ավելորդ ճյուղերի
աճումը 10 սանտիմետրից ավելի:

IX. ԿՈՐԵԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Կորեկի ցանքսը կատարել մոլախոտերից բոլորովին
մաքուր հողերում, լավ գտված և մրիկից ախտահանված
սերմերով:

2. Կորեկը ցանելուց 1 — 2 որ առաջ, ինչպես աշնա-
նավարում, այնպես էլ դարնանավարում անպայման անց-
կացնել նախացանքային մշակում բազմախոփանիներով,
հանած թևերով կամ կուլտիվատորներով, հետևից անմի-
ջապես տափանելով:

3. Կորեկի ցանքսը կատարել բավարար տաքացած հո-
ղում (12 — 14 աստիճան ըստ Ցելսիուսի 5 սանտիմետր

խորուժյամբ) յեգիպտացորենի ցանքսից հետո, ամառա-
յին կայուն տաք յեղանակի դեպքում:

4. Մոլախոտերից ամենամաքուր հողերում կորեկի
ցանքսը կատարել սովորական շարքային ձևով: Մոլախո-
տերից վոչ բավարար չափով մաքուր հողերում ցանքսը
կատարել անպայման լայնաշարքային ձևով. շարքամեջերի
լայնությունը 45 սանտիմետր կամ զուգաշար (լինտային)
ձևով յուրաքանչյուրում յերկու շարք՝ շարքերի 12 — 15
սանտիմետր սովորական հեռավորությամբ և զուգաշար-
քերի 45 — 50 սանտիմետր հեռավորությամբ:

5. Կորեկը վոչ բավարար խոնավ հողում ցանելու դեպ-
քում դաշտն անպայման գլանակներով հարթել:

6. Մոլախոտերի առաջին յերևալու դեպքում չսպասե-
լով կորեկի ծիլերի հայտնվելուն, կորեկի ամբողջ ցանքսը
պետք է ձեռքով խնամքով քաղհանել: Մինչև կորեկի ցո-
ղունի աճելը պետք է անպայման անցկացնել յերկրորդ
քաղհանը:

7. Կորեկի լայնաշար և զուգաշար ցանքսերում, յերբ
շարքերը պարզորեն նշվեն, կատարել միջարքային մշա-
կում, միաժամանակ ձեռքերով քաղհանելով մոլախոտերը
շարքերում և զուգաշարի միջանցքներում:

8. Միջարքային մշակումը և շարքերի քաղհանը կա-
տարել մոլախոտերի աճման ընթացքում, բայց ամռանը վոչ
պակաս, քան 2 անգամ:

X.

1. Բոլոր կուլտուրաների ցանքսը կատարել շարքացան-
ներով, վորոնք սարքավորված են ցանքսի սահմանված նոր-
մային համապատասխան, տրակտորային շարքացաններ
վրա անպայման կիրառել ակոսազծիչներ (մարկեր), իսկ
բոլոր ձիաքարը շարքացանների վրա՝ ձևիչներ:

Արգելել ձեռավոր ցանքսը, նաև դիշերային ցանքսը:

Արտերի ծայրերը ցանել առանձին:

2. Վորակավոր ցանքս ապահովելու համար.

ա) մինչև դաշտ դուրս գալը ստուգել շարքացանները
ցանքսի նորմայի տեսակետից:

բ) ճիշտ դասավորել շարքացանի խողովակները խողովակատախտակի վրա, պինդ ամրացնելով նրանց, թույլ չտալով, վոր մի կողմ թեքվեն (շարժվեն): Բոլոր խողովակավոր շարքացաններն անպայման բեռնավորել նույն քաշով (բեռների քաշն անպայման պետք է ստուգել):

գ) աշխատանքի ժամանակ հետևել սերմերի ճիշտ և համաչափ խորությամբ ծածկվելուն, կանոնավորելով խողովակների խորացումը լծակով և բեռնիչով:

դ) ցանքսի ժամանակ կանոնավոր էերպով մաքրել խողովակները բույսերից և կպած հողից:

ե) հետևել ցանոդ գործիքի աշխատանքին, թույլ չտալով սերմանցքները ծածկվելու:

զ) ցանքսի ընթացքում ստուգել ցանքսի սահմանված նորմայի ճշտությունը, ցանած տարածությունը և սերմացույի փաստորեն ցանված քանակն իրար հետ համեմատելով:

ը) շարքացանի առաջին ընթացքը կատարել խիտ անցկացված գծով (100 — 150 մետրից հետո), այդ գործի համար առանձնացնելով փորձված աշխատողներին:

թ) բացատներ հայտնվելու դեպքում անմիջապես ցանել:

Յ. Տեսակավոր ցանքսերը կատարել համապատասխան գաղափարում և նրանց համար առաջին հերթին հատկացնել աշնանավարը, լավագույն նախորդ բուսատեղերը և ամենամաքուր հողերը:

Տեսակավոր սերմերը ցանելու դեպքում վերջիններս ուրիշ տեսակ ցանքսերից և նույն կուլտուրայի շարքացանքսերից պահել հետևյալ նվազագույն հեռավորություն վրա:

Յեզիպտացորեն 1000 մետր

Արևածաղիկ 3000 »

Տզկանեփ 1000 »

4. Շարատունկ տեխնիկական կուլտուրաները ցանելիս հետագա տրակտորային մշակման համար խնամքով անցկացնել հողի նախացանքային նախապատրաստումը, տրակտորային ցանքսային գործիքները, շարքացանները սարքա-

դրել ցանքսի բարձր նորմայի համար և խստորեն պահպանել շարքերի ուղղագծությունն ու զուգահեռավորությունը:

Ցանքսի ժամանակ նախատեսել, վոր հետագայում տրակտորային քաղհանով գործիքների լայնությունը պետք է անպայման համապատասխանի ցանոդ գործիքների լայնությունը:

5. Կուլտիվատորների աշխատանքի ժամանակ շարատունկ կուլտուրաները մշակելիս խիստ կերպով հետևել կտրոդ թաթերի դրությունը, անպայման ամեն որ սրելով նրանց:

6. Շարատունկ կուլտուրաների մեքենայացրած նոսրացումն անցկացնելու դեպքում (փնջավորման ժամանակ), կուլտիվատորների առաջին ընթացքն անպայման կատարել խիտ անցկացված գծով և աշխատանքը կատարել անպայման ակոսագծիչի ոժանդակությամբ:

7. Մոլախոտերի աճման համեմատ, ժամանակին, բայց ամառը վոչ պակաս, քան յերկու անգամ, հնձել թմբերը, ճանապարհները, դաշտերի միջի չցանված հողամասերը և այլ վայրերը, վոչ մի դեպքում թույլ չտալով մոլախոտերի զարգացումն ու սերմնավորումը:

Յերկրհողվարչության պես՝ ՈՂԻՆՅՈՎ

Յերկրամասի գլխավոր գյուղատնտես՝ ԿԻՏԱՅԵՎ



Отв. ред. Г. А. Потенц. Пом. тех. ред. Д. М. Джинибалаян
Издание 69/4929. Объем $2\frac{3}{4}$ печ. лист. Формат 58x84/16 Уполкрайлит
№ 00—11459. Тираж 2000 экз. Заказ № 962. Сдано в набор 26 фев-
реля 1936 г. Подписано в печать 2 марта 1936 г.
Типография им. Стачки 1902 г. Ростов на Дону

ՀՀ Ազգային գրադարան



NL0287064

Цена 25 коп.
Գինը 400.

М 2783

14.636

арм

На армянском языке

**ОСНОВНЫЕ АГРОТЕХНИЧЕСКИЕ
ПРАВИЛА НА 1936 ГОД**

09/397-6

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ
КРАЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО
Ростов н-Д Буденновский пр. № 30

Գ Ր Ա Պ Ա Հ Ե Ս Ը
Նրստուկ-Դոն, Մոսկովսկայա, № 53
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ)